

## ՀԱՅԵՐԵՆԻ ՄՆԻԹԱՐՅԱՆ ԼԵԶԿԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՓԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԻՄՔԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆԸ

### Ա. Կ. ՂԱԶԱՐՅԱՆ

Մխիթար Սեբաստացին հայ առաջին եկեղեցականն է, որը ազգին ծառայելու նպատակով Վենետիկում հիմնում է կրոնական միաբանություն, առաջադրում ազգային վերածնության հեռահար ծրագիր՝ դառնալով հայոց հոգևոր վերածնության նախակարապետը: Կաթոլիկ վանականությունը դառնում է միջնորդ հայերի և եվրոպական լուսավորության միջև: «ԺԸ դարի սկզբում երկու հոյակապ անձնաւորութիւններ ձեռք են առնում հայ կեանքի վերածնութեան գործը. Իսրայէլ Օրին երկնում է Հայաստանի ազատութեան գաղափարը և Մխիթար Աբբան սկսում է հայ գրաւոր մշակոյթի վերածնութիւնը»<sup>1</sup>:

Մխիթարյան վերածնական առաքելությունը համեմատելի չէ վերջին դարերի ուրիշ ոչ մի գրական-կրթական շարժման հետ<sup>2</sup>:

Մխիթար Սեբաստացին այնպիսի հիմքերի վրա է դնում հայկական մշակութային վերանորոգությունը, որ կարողանում է ապահովել անխափան ընթացք, որը վերանում է համազգային շարժման: Նա իր գործունեությունը սկսում է Հայաստանի համար անբարենպաստ ժամանակաշրջանում: XVII դարում թե՛ Արևմտյան և թե՛ Արևելյան Հայաստանում թուրք-իրանական պատերազմի և ջալալիների ասպատակությունների հետևանքով հայերի արտագաղթը ձգվում էր դեպի Կ.Պոլիս, Բալկաններ, Ղրիմ և Սև ծովի առափնյա մյուս շրջանները: Հայաստանը խարխափում էր տգիտության խավարի մեջ, և Գնացորինակ անկում դեռևս չէր գրանցվել հայոց պատմության ոչ մի շրջանում: Ինչպես գրում է Առաքել Դավրիժեցին՝ «ոչ բնաւ ընթեռնուին գիրս, այլ էին փակեալ և լռեալ մատեանք»<sup>3</sup>:

Սակայն «XVII դարի երկրորդ տասնամյակից հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական կյանքն սկսում է աշխուժանալ, ըստ այդմ էլ՝ վերակենդանացման նշաններ են նկատվում նաև գիտամշակութային կյանքում»<sup>4</sup>: Ցավոք, դա վերաբերում է միայն որոշ գաղթօջախների (Նոր Ջուղա, Լվով, ավելի ուշ՝ Մաղրաս): Հայաստանի սոցիալ-տնտեսական, առավել ևս կրթամշակութային իրավիճակը մնում էր օրհասական, առավել վտանգավոր եզրին էր հասել լեզվամշակույթը:

Հայությունը կրթված չէր և իր բարոյախնացական մակարդակով զիջում էր ոչ միայն եվրոպական ազգերին, այլև հետընթաց էր ապրել անցյալի սեփական նվաճումներից: Լեզուն անմշակ էր, անհասկանալի, աղավաղված, ինչն էլ կասեցնում էր հոգեմտավոր գործունեությունը, խարխլում մշակութային-պատմական հիմքերը: Տեղի էր ունենում հոգևոր և քաղաքական մեկուսացում, և, որ ամենակարևորն էր, վտանգված էր հայկականության ոգին: Հրաչյա Աճառյանը գրում է, որ մայրենի լեզուն կորցրած հայերը թուրքերեն են խոսում թե՛ տանը, թե՛ դրսում, եկեղեցիներում արարողությունը կատարվում է գրաբար, իսկ քարոզ և ծանուցում՝ թուրքերենով: Լեզվավիճակի վտանգը խորացավ, երբ ստեղծվեց հայատառ թուրքերեն գրականությունը:

<sup>1</sup> Հ. Աճառեան, Պատմութիւն հայոց նոր գրականութեան, սրակ Ա, Վաղարշապատ, 1906, էջ 104:

<sup>2</sup> Տե՛ս Լ. Հայր Զեքիան, Մխիթար Սեբաստացի Լուսանորդու ու ռախիբայ, Վենետիկ, 1977, էջ 59:

<sup>3</sup> «Պատմութիւն Առաքել վարդապետի Դավրիժեցոյ», Վաղարշապատ, 1884, էջ 221:

<sup>4</sup> Հ. Միրզոյան, XVII դարի հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծություն, Եր., 1983, էջ 61-62:

Մխիթարյան վերածնական շարժումը սկսվում է միաժամանակ բոլոր ուղղություններով՝ լեզվամորթոզման, կրթության, գիտության, մամուլի, հրապարակախոսության, արվեստի: Մխիթարյան ծրագրի էությունը, ազգային խնդիրների լուծման մեթոդաբանությունը, քաղաքական միտվածությունը և բարենորոգումների համակարգված, կոտ տրամաբանական ընթացքը դեռևս մնացել են շուտաբանված և լուրջ ուսումնասիրությունների կարիք ունեն: Մխիթարյան միաբանության երեքդարյա հայագիտական հզոր գործունեությունը չի շեղվում Մխիթար Սեբաստացու ծրագրային հիմնադրույթներից:

Մխիթարի ծրագիրը նպատակ ուներ արթնացնել և ուղղորդել ազգի բարոյական ու մշակութային կյանքը՝ հոգևոր շարժման մեջ միավորելով հայոց բոլոր հատվածները մեկ ընդհանուր խնդրի՝ հայկականության վերականգնման և ազգային միասնության գաղափարի իրականացման շուրջ: Ծրագրի իրականացումը ենթադրում էր հայ ժողովրդի հոգևոր-իմացական սահմանների ընդարձակում, սոցիալական մակարդակի բարձրացում, ազգի ընդհանուր բարօրության և բարգավաճման ընթացքի նախապատրաստում:

Ազգային վերածնական շարժումը գիտական գրականության մեջ հիմնականում գնահատվել է իբրև կրթական-լուսավորական գործընթաց: Սակայն, մեր կարծիքով, այն ունի ընդգծված ազգային-քաղաքական բովանդակություն և նպատակ, որի հիմնական միտվածությունը ազգային միասնության ստեղծումն է: Ծրագիրը ենթադրում էր.

1. Վերականգնել անցյալի հետ հայության պատմական և մշակութային ընդհատված կապերը՝ ապահովելով ժառանգորդման գործընթացը:

2. Արթնացնել ազգային ինքնագիտակցությունը՝ նպաստելով ազգային ինքնաճանաչմանը:

3. Ազգային բազմադարյան մշակութային ժառանգությամբ արժանապատվության զգացում հաղորդել հայությանը՝ որպես հզոր մշակույթի կրողի:

4. Բարոյական և իմացական բոլոր միջոցներով համախմբել հայությանը՝ պատմության, լեզվի, կրոնական, ազգային սովորույթների, ավանդույթների շուրջ՝ ձևավորելով համազգային հոգևոր կեցություն. «Մխիթար Վարդապետ գիտակցօրէն ուզած է որ իր Միաբանութիւն ըլլայ Հայ՝ ծէտով, ժամերգութեամբ, պատարագով ու պատարագամատոյցով, ծիսական մատենաներով, ծիսական տօներով ու պահերով, առաւել նաեւ իր միաբաններու կազմով, որոնք միայն հայերէ պէտք է բաղկացած ըլլան. եւ երկրորդ՝ առաքելական ասպարէզի իր ընտրութեամբ՝ որ կը կայանայ հայ ժողովուրդին հոգեմտաւոր լուսաւորութեան եւ կազմաւորումի գործին մէջ... որոնք պէտք է բխին Հայ ծէսէն, հայ իրաւակարգէն, Հայ Եկեղեցոյ եւ հայ վանականութեան հոգեկանութենէն»:

Մխիթարյան ծրագրի մեթոդաբանությունը ենթադրում է միաժամանակյա գործընթաց երեք ուղղությամբ՝ կրոնական, կրթական և գրական-ստեղծագործական: Այն պետք է մտավոր կենդանություն ներարկեր ընդարմացած հայ ազգի մեջ, նպաստեր գիտությունների յուրացմանը և ազգին ուղղորդեր դեպի քաղաքակրթական լայն ճանապարհ՝ լինելու «գրականութեամբ և կենցաղօգուտ գիտութեամբ առաջին ազգ, Ասիոյ խաժամուժ ազգերուն մէջ»: Ծրագիրը ունի տրամաբանական աստիճանակարգում, որի հիմքում ընկած է ազգային միասնությունն ապահովող միասնական լեզվի ստեղծումը: Լեզվաշինության խնդրի առաջադրումը դարձավ ծրագրի մեթոդաբանական հիմնակետը:

Մխիթարը հայության միավորման անհրաժեշտ միջոցը դիտում է միասնական լեզուն, որը պիտի ապահովեր ընդհանուր մշակութային դաշտի վերականգնումը: Լեզուն նորից պետք է ստանճներ այն դերը, որը կատարեց V դարում, երբ հայկական գրերի ստեղծումը դարձավ հզոր պատենչ ազգի հոգևոր հիմքերի խարխլման դեմ: Նույն մշակութային, ազգային նույն քաղաքական խնդիրն էր լուծում Սեբաստացին: Ավելին, եթե Մաշտոցի գործունեությունը հովանավորում էր Վառձապուտի թագավորը, և այդ

<sup>5</sup> Տ. Եսաբուզման, Մխիթարեան գաղափարական և մխիթարեան ինքնութիւն, Վենետիկ, 1994, էջ 50:

<sup>6</sup> Բ. Մարգիսեան, Երկհարիւրամեայ գրականական գործունեութիւն և նշանաւոր գործիչներ Վենետիկոյ Մխիթարեան միաբանութեան, Վենետիկ, 1905, էջ 44:

գործընթացը պետական կարևորության խնդիր էր դարձել, ապա Սեբաստացու լեզվաշինությունը ավելի բարդ դերակատարում ունեւր, որովհետև նա իրագործում էր «միմիայն իր անձնական ճիգովը, և չափազանցութիւն չէ ըսել թէ Մխիթարի ծրագիրը ատի ընդարձակ էր. տեսնելով հայրենի երկրին մէջ տիրող քաղաքական, մտաւորական, բարոյական մեծելութիւնը»<sup>7</sup>:

**Հայոց լեզուն՝ որպէս միասնական համակարգ, Մ. Սեբաստացու լեզվաշինության գաղափարական հենքն է:** Սեբաստացին խնդիր է դնում ուսումնասիրել միասնական լեզվահամակարգի բոլոր հնարավորությունները, ուրվագծում լեզվամշակույթի զարգացման ուղիները: Լեզուն ազգի ընդհանուր ստեղծագործությունն է, ձևավորում է ազգի հոգևոր կյանքը՝ կազմակերպելով ազգային հոգեմտակերպը: Ազգային գիտակցությունը միասնական է այնքան ժամանակ, որքան ազգի լեզուն համընդհանուր է: Գրաբարի երկարատև հաստատում գոյությունը դարերի թոհուրոհի մէջ կարողացել է հավատի հետ միասին ազգի ինքնությունն ապահովել: Այդպիսի քաղաքակրթություն ունեցող ազգի լեզուն, բազմադարյան գրավոր մշակման ենթարկվելով, ձեռք է բերել կոտ օրենքներ ու ներքին տրամաբանություն: Դրանք են կազմակերպել ազգի լեզվամտածողությունը: Հայոց պատմությունը հանգեցրել է երկու լեզվական իրողության գոյության. գրավոր՝ լեզվամշակման բովով անցած գրաբարի և բանավոր՝ խոսակցական, անմշակ աշխարհաբարի: Լեզվաշինության մեթոդաբանությունը կառուցելու համար Սեբաստացին նախ պիտի պարզեր, թե՝

ա) աշխարհաբարը գրաբարի արդյո՞ւնք է, նրա կիրառական ձև՞ը,

բ) գրաբարից անկախ, գրավոր լեզվին զուգահեռ, գոյություն ունեցե՞լ է ռամկական լեզու,

գ) գրաբարն ու աշխարհաբարը նո՞ւյնն են եղել ու հետո իրարից հեռացել են. գրաբարը մնացել է գրավոր լեզվամտածողության օրենքների շրջանակում, իսկ աշխարհաբարը՝ ենթարկվել բազմաթիվ փոփոխությունների:

Մխիթարը համարում է, որ գրաբարը և աշխարհաբարը միասնական են եղել և գրավոր լեզվի ստեղծումով դարձել են իրար հետ զուգահեռ ընթացող լեզվական իրողություններ, ավելին՝ ամեն զավառ ունեւր իր աշխարհիկ լեզուն: Նա հստակ ձևակերպում է գրաբարի և աշխարհաբարի ծագումնաբանական ու գործառութային խնդիրները, որոնց ճիշտ ընկալումը գրաբար-աշխարհաբար հետագա պայքարը թե՛ լեզվագիտական, թե՛ լեզվափոխութայական առումներով անիմաստ է դարձնում: Աշխարհաբարը գոյություն է ունեցել վաղնջական ժամանակներից, և սխալ է այն դիտարկել իբրև գրաբարի «ժառանգ», «մանուկ» կամ «արդյունք», առավել ևս՝ նրա հիմքի վրա ստեղծված լեզվակերպ:

«Ի սկզբանէ յառաջին դարուց, յորում բարբառ մէր ստեղծու, ամենայն հայք խօսելին գրաբար լեզուաւ: Այլ ՚ի յառաջել դարուց և ընդ վտարիլ կողմանց. և ընդ խառնակիլ ազգաց, առ սակաւ սակաւ այլայլեցաւ ընդարբոյս բարբառն, ըստ տառի, ըստ վանկի... Ստեղծան և անհամար բառք գաւառականք, սպրդեցին մրտին և բազումք բառք այլազգականք, և ել բարբառս այս ռամկական, որ կոչի աշխարհաբար լեզու: Իսկ վաղածին լեզուն մնացեալ ի մէջ ազնուաց և իմաստնոց՝ էանց ՚ի գիրս, և եղև մեզ ՚ի լեզու գրաբար. փակեալ սկզբնատուր կանօնօք եղելովք ՚ի բնութենէ և հաստատելովք ՚ի լեզուազէտ ճարտարաց հայաստանեայց»<sup>8</sup>, որոնք այբուբենի չգոյության պայմաններում, շարունակում է Մխիթարը, գրեցին բազմաթիվ մատյաններ այլ այբուբենների օգտագործմամբ, ինչպէս խոսում են դրանց գոյության մասին մեր պատմիչները, հատկապէս Մ. Խորենացին: Հայոց գրերի ստեղծումից անմիջապէս հետո մատյանների ստեղծումն արդեն գրամշակման ենթարկված լեզվի գոյության ապացոյց է:

Մխիթարի լեզվամորթզման գործընթացը սկսվում է ազգին հասկանալի լեզվի՝ աշխարհաբարի կանոնակարգումից: Որքան էլ ճոխ և պաշտելի լիներ գրաբարը, նա գիտակցում է,

<sup>7</sup> Ա. Զօպանեան, Վենետիկի Մխիթարեանները, «Անահիտ», Բարիզ, 1899, թիվ 12, էջ 358:

<sup>8</sup> Մ. Սեբաստացի, Բան առ ընթերցօղս, «Բառգիրք հայկազեան լեզուի», հ. 1, Վենետիկ, 1749, էջ 12 (այսուհետ՝ Բառգիրք հայկազեան լեզուի):

որ ազգային միասնությունն ապահովող լեզուն պետք է դառնա գործածելի, հասկանալի աշխարհաբարը: «Ազգիս անտերունջ ըլլալուն համար է՝ որ գոութեանց մէջ անգործածական եղած է աշխարհաբարը... ուստի եթէ ընթերցողք ի սկզբան կրած դժուարութիւններն չմեղուին և չեպերեն զայն շուտով պիտի համոզուին թէ որչափ օգտակար է անոր գործածութիւնը զուրթեանց մէջ»<sup>9</sup>:

Մխիթարյան լեզվաշինությունն ընթանում է պարզից բարդը՝ վերընթաց ուղեգծով, համադրական մեթոդով: Սեբաստացին խնդիր է դնում կանոնավարել աշխարհաբարը գրաբարով՝ «գրաբարին հետ աշխարհաբարը, հնոյն հետ նորը», «և հանդէպ աշխարհաբարին կարգել զգրաբար բառից»<sup>10</sup>:

Գործընթացը ենթադրում էր կանոնակարգման փուլային բարդացում: Լեզվաշինության ծրագրային հիմնադրույթներն են.

1. *Հայկական լեզվամտածողության և աշխարհաճանաչողության արդյունք հանդիսացող գրաբարի՝ իբրև լեզվական նորմի ընդունում:*

2. *Գրաբարյան բառամթերքի վերականգնում և գրավոր լեզվի հետագա ընթացքի մեթոդաբանության մշակում:*

3. *Գրաբարի ընդունում՝ իբրև աշխարհաբարի հիմք և աղբյուր, գրաբարի մշտական գործառնական ներկայություն աշխարհաբարի կայացման և ընթացքի մէջ:*

4. *Լեզվի և ազգի խորանիստ կապի գիտակցում՝ լեզվի պատմականության բացահայտում: Լեզվի դիտարկում՝ իբրև պատմական իրողություն, որն անընդհատ է:*

5. *Լեզվի՝ իբրև միասնական համակարգի հիմնադրույթի ընդունում, լեզվի պատմական ժառանգորդման սկզբունքների բացահայտում:*

6. *Լեզվի՝ որպէս ազգային ինքնագիտակցության կայացման մախապայմանի դիտում. բնական հայրենիքի սահմանների գիտակցում, լեզվի պատմական տարածքի որոշում, լեզվի մէջ պատմական հայրենիքի հերմենևտիկական բացահայտում:*

7. *Լեզվատարբերակների մշակում՝ գիտական, քաղաքական, հռետորական, թարգմանչական, հրապարակախոսական-մամուլի, գրական-գեղարվեստական, ուսումնական-մանկավարժական լեզու:*

1727 թ. Սեբաստացին հրատարակում է աշխարհաբարի առաջին համակարգված քերականությունը՝ «Դուռն քերականութեան աշխարհաբար լեզուին Հայոց» վերնագրով: Գրքի վերջում զետեղում է 58 էջից բաղկացած բառարան, որն ավելի գործառնական դարձնելու համար նա նաև հայերենից թուրքերեն բացատրություններ է տեղադրում նրանց համար, ովքեր միայն թուրքերեն գիտեին: Այս բառարանից հազարավոր օրինակներ են տարածվում Փոքր Ասիայի հայ ազգաբնակչության մէջ:

Գավառներում հայությունը խոսում էր թրքախառն, պարսկախառն գավառաբար-բառներով: Բայերը լծորդում և խոնարհում, գոյականները հողվում էին կամայական սկզբունքներով: «Կենդանի լեզուն՝ աշխարհաբարը, առաջին անգամ քերականօրէն քննելու պատիւը կը պատկանի Մխիթար Աբբային»<sup>11</sup>:

Սեբաստացին շորս գլխավոր գավառաբարբառները մաքրեց օտարախոսություններից, աղավաղումներից, վերականգնեց ոլյանց ընդհանուր լեզվակառուցվածքի հիմքերը՝ մատնանշելով արևմտահայ «ոսմկօրէնի» կարգավորման ուղիները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Փոքր Ասիայում բնակվող հայելի լեզուն մնացած գավառաբարբառների հետ շատ ընդհանրություններ ուներ, Սեբաստացին աշխարհաբարի հիմք ընտրեց այդ լեզուն<sup>12</sup>: Նրա մշակած աշխարհաբարը ընդհանուր հայտարարի էր բերում հիմնական գավառաբարբառները, և այդ լեզվակազմակերպումը միանգամայն ընդունելի դարձավ բոլոր գավառների ու պոլսաբնակ հայության համար:

<sup>9</sup> Մ. Սեբաստացի, Բան առ ընթերցողս, «Գիրք քրիստոնեականի վարդապետութեան աշխարհաբար լեզուս», Վենետիկ, 1727, էջ 4:

<sup>10</sup> Մ. Սեբաստացի, Բառգիրք հայկազգեան լեզուի, հ. 1, էջ 6:

<sup>11</sup> Ա. Ալկոյաճեան, Պատմութիւն հայ դպրոցի, հ. 1, Գահիրէ, 1947, էջ 618:

<sup>12</sup> Տի՛ս Գ. Ջահուկյան, Հայ քարառագիտության ներածություն, Եր., 1972, էջ 82-119, 217:

Կարելի է եզրակացնել, որ Փոքր Ասիայի խոսակցական լեզվի ընտրությունը՝ ա) լեզվաբանական հանճարեղ կոռուստ էր, բ) մշակութային ժառանգորդունը պահպանած տարածքի ճշգրիտ ընտրություն էր, գ) Մխիթարի լեզվաշինության գաղափարաքաղաքական հիմքերից մեկն էր, որովհետև Փոքր Ասիայի գավառների հայությունն էր համալրում և ստեղծում Պոլսի հայ համայնքը:

Լեզվական քացառիկ կանխատեսությամբ Մխիթարը ավանդում է աշխարհաբարի հիմնական կանոնները. «Կը թելադրէ հոյովմունքի ու լծորդութեանց մէջ այնպիսի ձեւեր՝ որոնք յետոյ տիրական և նախընտրելի ձեւերը պիտի դառնային»<sup>13</sup>:

Աշխարհաբարի քերականական կարգավորմանը զուգահեռ (համադրական մեթոդաբանության համաձայն) Սեբաստացին սկսում է գրաբարի վերականգման աշխատանքները: Գրաբարի ընդունումը՝ իբրև լեզվական նորմ, ենթադրում էր գրաբարի ուսումնասիրման, գրավոր լեզվամտածողության վերականգնման գործընթաց, ուստի Մխիթարը ձեռնարկում է գրաբարի քերականության ստեղծում, քանի որ գրավոր լեզուն շատ էր հեռացել դասական գրաբարից: Գրաբար էին ներմուծվել լատինաբանություններ, օտար լեզվատարրեր (ունիթորների գործունեության հետևանքով), XVII դարում հանդգնում էին նույնիսկ խմբագրել հայկական դասական գրականությունը՝ լատինական կանոններին համաձայնեցնելով, հայերեն տերմինները լատիներենի և հունարենի վերածելով: Այն համոզումներն էր իշխում, որ լատիներենը բարձրակարգ դասական լեզու է և այնքան կանոնավոր ու օրինակելի, որ ամեն ազգ պիտի ձգտի հարմարվել լատինական լեզվականոններին: Մխիթարը խորշում էր այդ աղավաղումներից: Սկսելով լատինամոլությունից և խեղաթյուրումներից հայերենի մաքրման գործընթացը՝ նա գիտեր որ իրեն Հռոմի հարվածների տակ է դնում, սակայն քաղաքական հմուտ գործչի իր նկարագրով կարողանում է շրջանցել այդ վտանգը:

**Լեզվաշինության հիմք է ընդունվում V դարի դասական լեզվամտածողությունը**, որն անաղարտ պահպանել է տոհմիկ հայերենը, որտեղ թաքնված են ազգային լեզվաստեղծագործական գործընթացի ավանդույթները: Խնդիր է դրվում վերականգնել հայերենի իմաստավորման և իմաստաստեղծման բնական-տրամաբանական ընթացքը՝ «վասն ի վերայ հասանելոյ գաղտնեաց հայերեն լեզուի, և այնպէս տիրելոյ իմն նախնական հանգամանաց նորա»<sup>14</sup>:

1730 թ. Սեբաստացին հրատարակում է «Քերականութիւն գրաբառ լեզուի հայկազեան սեռին» աշխատությունը, որը բանալի պիտի ծառայեր հայոց լեզվամտածողության գանձարանը մտնելու համար: Մխիթարյանները (Մ. Չամչյան, Խ. Սյուրմելյան, Գ. Ավետիքյան, Ղ. Ինճիճյան, Մ. Աղաչարյան, Մ. Ավգելյան, Ա. Բագրատունի, Ղ. Ալիշան) ոչ միայն վերականգնում են գրաբարյան հարստությունը Մխիթարի մեթոդաբանությամբ, այլև գրաբարի կանոնավորությամբ գրական մշակման ենթարկում աշխարհիկ լեզուն: Այն պետք էր հասցնել դասական գրաբարի բարձրության, որն է՝ կանոնավորություն, վայելչություն, «հնչականություն», բառաստեղծման փիլիսոփայական-ստեղծագործական ազատություն և ոչ կամայականություն: «Ժէ դարեն մինչեւ այդ ժամանակ ոսմկօրէնն այնքան զգալի կազմակերպութիւն կրած չէր, որքան կրեց անակնկալ կերպով ԺԸ դարու երկրորդ քառորդին Մխիթարայ ձեռքով»<sup>15</sup>:

Մխիթարը լեզուն համարում է ազգային հանճարի ամբողջության, ազգային ինքնության արտահայտություն, լեզուն իրականացնում է ազգային գիտակցության գործառույթը, այն չի կարելի «խրամակարկատ անել»: Լեզուն հարստանում է հոգևոր իմաստների

<sup>13</sup> Մ. Ճանաչեան, Պատմութիւն արդի հայ գրականութեան, Կ. Ա. Վենետիկ, 1953, էջ 24:

<sup>14</sup> Ն. Ակինեան, Դասական հայերենը և Վիեննական Մխիթարեան դպրոցը, Վիեննա, 1932, էջ 387:

<sup>15</sup> Բ. Սարգիսեան, Երկհարիրամեայ գրականական գործունեութիւն և մշակաւոր գործիչներ Վենետիկոյ Մխիթարեան միաբանութեան, էջ 131:

բազմազանությամբ, և յուրաքանչյուր անհատ, այդ լեզուն գործածելով, վերականգնում է մտավոր այն գործունեությունը, որն իրականացվել է մինչ ինքը: Ուստի կարիք չի զգացվում նոր մտավոր գործողություն կատարել՝ նշանակելու իրականությունը: Որպեսզի լեզուն կարողանա կատարել իր ճշմարիտ դերակատարումը, անհրաժեշտ է վերականգնել նրա իմաստասիրական բովանդակությունը, բազմանշանակությունը, «վասն զի բնական է մարդոյ 'ի գիտութեան յատկութեանց՝ գալ 'ի գիտութիւն էութեան»<sup>16</sup>:

Այս խնդիրը մի քանի դար անց դնում են եվրոպացի փիլիսոփաները, սակայն Սեբաստացու՝ լեզվի և մտածողության, բառի բազմանշանակության փիլիսոփայական իմաստավորումը ավելի հիմնավոր է: Գաղամերի կարծիքով, բառն ունի իր նշանակությունը ոչ միայն համակարգում, այլ դրա գտնվելը համատեքստում ենթադրում է, որ անհնար է անջատել բառն իր բազմանշանակությունից, որն ունի ինքնին, նույնիսկ եթե այդ համատեքստում դրան տրված է միանշանակ իմաստ<sup>17</sup>: Առավել հետաքրքիր է մեկնաբանում Մխիթարը լեզվի և մտածողության փոխադարձ կապը բառի բազմանշանակության կապակցությամբ: «Ամենայն ինչ ընդ բառի անկանի. և իսկութիւն ամենայնի ըստ բանականացս՝ բառի բացատրի. ապա ուրեմն որպէսզի մարթասցի ոք մեկնել զամենայն բառ, հարկ է նմա տեղեակ լինիլ ամենայնի, զոնէ քերականաբար, և բազմաց՝ նաև իմաստասիրապէս և աստուածաբանօրէն»<sup>18</sup>: Իսկ բառի բազմանշանակության կապակցությամբ Սեբաստացին շեշտում է ոչ միայն համատեքստի մեջ դրա դերակատարումը, այլև պարագայական պատկանելությունը. «Նախ զի բազումք՝ 'ի բառից ոչ կարեն միով բառի բացատրիլ, և թէ և բացատրեսցին. բայց ոչ ըստ պատկանաւոր պարագայից»<sup>19</sup>:

Այս հիմնադրույթը զարգացնում են մխիթարյան մտածողները՝ դիտարկելով լեզուն իբրև հոգևոր տեղեկատվության պահպանման և փոխանցման ծածկազիր: Նրանք պարզաբանում են, որ լեզվական մշակույթի արժեքային կողմնորոշչները դրոշմված են ազգի հոգևոր կառույցում, որ լեզուն ամփոփում է ժողովրդի աշխարհայացքային համակարգի ամբողջությունը, աշխարհի նկատմամբ նրա վերաբերմունքի բազմադարյան ընթացքը, աշխարհաճանաչողական մտակաղապարները. օրինակ, ըստ Ղ. Ալիշանի՝ լեզուն կրում է բազմաթիվ առեղծվածներ, որոնց բացահայտումով կարող են պարզվել համաաշխարհային և ազգային պատմության շատ գաղտնիքներ:

***Գրաբարի նկատմամբ Մխիթար Սեբաստացու որդեգրած քաղաքականությունը սերպարած է նրա պատմափիլիսոփայական հայեցակարգի հիմնարար դրույթների հեպ, թիում է «մեկ ազգ, մեկ պատմություն, մեկ եկեղեցի» գաղափարականից:***

Սեբաստացուն և մխիթարյաններին մեղադրել են գրաբարամուլության, գրաբարն անվերապահորեն իբրև գրական միակ լեզու ընդունելու մեջ, նույնիսկ Մխիթարից մեկ դար անց հայ լուսավորիչները, օրինակ՝ Ստ. Նազարյանը, գրում են, թե ինչ իմաստ ունի պահանջել, որ ռուսահայր զրի տաճկահայոց նման, ինչ վնաս կա մեկ ծաղիկի տեղ երկու ծաղիկ ունենալ ազգի մեջ, գրաբարը մեռած մայրն է, և չարժե նրան կենդանացնել: Անթույլատրելի է «նոր լեզուն կամաւ և գիտութեամբ ձգձգել և մօտեցնել իին զրոց լեզուին և այդպէս մեռուցանել կենդանի աշխարհաբարի ինքնաշարժ հոգին»<sup>20</sup>:

Մխիթարը պայքար է սկսում լեզվական միություն հաստատելու համար՝ լեզվական տարանջատման մեջ ևս տեսնելով քաղաքական տարանջատման ազգակործան վտանգը՝ լեզվի ու պատմության միասնությունը դիտարկելով քաղաքական միասնության հիմք: Գաղափարական այս հիմնադրույթն ընդունում են նաև մյուս մխիթարյանները: Ալիշանը գրում է. «...հայրենի պատմութիւնն՝ հայրենի լեզու կ'ուզէ. մանաւանդ եթէ այն լեզուն ունենայ իր յատուկ շնորհքն, վայելչութիւնն և ճաշակն (համն)»<sup>21</sup>:

<sup>16</sup> Մ. Սեբաստացի, Բաղդիրը հայկազնան լեզուի, հ. 1, էջ 6:

<sup>17</sup> Sh'u Г. Гадамер, Язык и понимание, в кн.: «Актуальность прекрасного», М., 1991, էջ 43-60:

<sup>18</sup> Մ. Սեբաստացի, Բաղդիրը հայկազնան լեզուի, հ. 1, էջ 7:

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 6:

<sup>20</sup> Ստ. Նազարեան, Հայկական լեզուի խորհուրդը, «Հիսիսափայլ», 1858, թիվ 1, էջ 3-37:

<sup>21</sup> Ղ. Ալիշան, Յառաջարան, «Հայապատում», Վենետիկ, 1901:

Լեզուն պատմական իրողություն է, ինչպես նաև՝ մեր պատասխանատվությունը պատմության նկատմամբ: Մխիթարը լեզվի պատմականության հարցադրումով հիմք է դնում բնական հայրենիքի սահմանների գիտակցությանը, որը դարձավ լեզվամշակույթի պատմափիլիսոփայական խնդրակարգի միտվածությունը: Նա առաջին անգամ առաջադրում է լեզվի պատմափիլիսոփայության հիմնադրույթները՝ տալով նաև լուծման ուղիները: Խնդրակարգը պարունակում է.

1. Հայերենի ծագման խնդիրը (Մխիթարից սկսած՝ այն միաբանության գիտնականների հայագիտական գործունեության կարևորագույն խնդիրներից է).

ա) հայերենը աստվածային իրողություն է, որն ապացուցվում է մի շարք լեզվական հատկանիշներով (այս խնդիրը ավելի շատ քաղաքական, քան կրոնական միտում ունի),

բ) հայերենի ծագումը տարբերվում է այլ լեզուների ձևավորման եղանակներից. «քանզի լեզու մեր ոչ հնարեցա՝ ՚ի խառնմանէ բարբառոյ այլոց ազգաց, որպէս են բագումք ՚ի լեզուաց արևելեայց, և արևմտեայց. այլ է մեզ երկնածիր, սկսեալ յառաջին դարոց»՝ յորս յանցանէլ տիեզերահեղձոյց պատուհասիցն»<sup>22</sup>:

2. Հայերենը մայր լեզու է (Մխիթարը գրում է, որ մայր լեզուներից մեկն է, թեև ավելացնում է՝ հույն և եվրոպացի գիտնականներից շատերը պնդում են, որ հայերենը աշտարակաշինությունից առաջ էլ գոյություն ուներ)<sup>23</sup>: Համեմատական, իսկ ավելի ուշ կառուցվածքային լեզվաբանության ընձեռած մեթոդներով մխիթարյանները փորձում են ապացուցել Սեբաստացու վերոհիշյալ դրույթը, իսկ Ալիշանը համոզված է, որ պետք չէ ջանքեր գործադրել այլևայլ փաստարկներ որոնելու, դրանք լիովին ընձեռում է հայոց լեզուն.

«Եւ եթէ այսու հանդերձ չարաչար անձնատեսութիւն համարուի պայծել Հայոց ընդ երիցութիւն իւրեանց և ընդ կենդրոնականութիւնն, թերես ոչ փոքրագոյն վատութիւն և կուրութիւն պիտի ըլլայ այսքան վկայութիւններ և աւանդութիւններ չտեսնելը, և զարմանալի կազմութիւնը և ճոխութիւնը սեփական լեզուին»<sup>24</sup>:

3. Հայերենի անդրամիկությունը ենթադրում է հայերի հնագույն ազգ լինելը, ինչը պայմանավորում է հայրենիքի աստվածային-բնական գոյությունը և յուրահատուկ վերաբերմունք մշակում այս իրողությունների նկատմամբ:

4. Լեզուն ազգային ինքնության պահպանման միջոց է, հիմք, ազգի միավորման և հայրենասիրության նախապայման: Լեզուն ազգին միավորում է ոչ միայն տարածական, այլև ժամանակային կտրվածքով, վերադարձով պատմական անցյալին. «Լեզուն կորսնցնելէ ետև և մանաւանդ անոր հանդեպ անհոգ ըլլալեն ետև մեկալ ազգային սովորությունք և հիշատակք և մշանք շուտով կկորսվին, ուրեմն ազգասիրության մեծ և խիստ մեծ օգուտ կընէ ազգին լեզուն»<sup>25</sup>:

5. Լեզվի «հայկազանութեան» վերականգնում և հիմնարար սկզբունքների բացահայտում, ինչով կուղղորդվի լեզվի զարգացման ընթացքը. «որք ենն՝ հայկազեանք են և ոչ այլազգականք, և այս ոչ միայն ՚ի հասարակ բառս՝ այլև յուսումնասիրականս, վասն զի ՚ի քերականութենէ մինչև ցաստուածաբանութիւն՝ հազիւ գտանի բառ ինչ, որ չիցէ հայկական, ներհակ այլոց ոմանց լեզուաց»<sup>26</sup>:

6. Գրաբարյան հարստության վերահանումը՝ իբրև նրա գերազանցության ապացույց այլ լեզուների համեմատությամբ. գիտական մշակվածություն, գաղափարական-իմաստային խորքայնություն, կառուցվածքի ճկունություն. «և զարմանալի քան զայն՝ ոմնի ի ներքո յինքեան ընդարձակութիւն և ճոխութիւն, որով սակաւք քան զնա կը գերազանցեն, իսկ շտեմարանութեամբ բառից զանազան ասացեալ լեզուաց, թերես ոչ սամակրիտ և ոչ այլ ոք ի լեզուաց կը հաւասարի իրեն»<sup>27</sup>:

<sup>22</sup> Մ. Սեբաստացի, Բաղդիթք հայկազեան լեզուի, հ. 1, էջ 15:

<sup>23</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>24</sup> Ղ. Ալիշան, Ծագումն հայ ազգի և լեզուի, «Հայաստան Յառաջ քան զիննկն Հայաստան», Վենետիկ, 1904, էջ 105:

<sup>25</sup> Ղ. Ալիշան, Ազգասիրություն, «Երկեր», Եր., 1981, էջ 184:

<sup>26</sup> Մ. Սեբաստացի, Բաղդիթք հայկազեան լեզուի, հ. 1, էջ 15:

<sup>27</sup> Ղ. Ալիշան, Հայաստան Յառաջ քան զիննկն Հայաստան, Վենետիկ, 1904, էջ 105:

7. Գրաբար-աշխարհարար հարաբերակցության խնդիրը մշակելիս Մխիթարը ելնում է պատմավիճիտփայական իր խնդրակարգից: Վերականգնելով գրաբար-աշխարհարար ժառանգորդման սկզբունքը՝ նա նպատակ է դնում բացահայտել պատմության բնականոն ընթացքը: Հեռանալ գրաբարից՝ նրա համար նշանակում է հեռանալ մեր պատմությունից, ժողովրդի իմաստությունից, արմատներից՝ արհամարհելով ոչ միայն լեզվական մշակույթը, այլև պատմությունը:

Մխիթարյան լեզվաշինության բարձրակետը «Հայկազյան բառարանն» է, որով լեզվաճանդագման գործունեությունը մտնում է նոր փուլ: Սեբաստացին սկսում է աշխատել իր աշակերտների հետ 1727 թվականից և ավարտում այն 1745-ին: Բառարանը տպագրվում է նրա մահից երկու ամիս անց: Խոսելով բառարանի ստեղծման դրդապատճառների մասին՝ Մխիթարը գրում է, որ մեր լեզվի վայելչությունը կործանվում էր, եթե տերը մեզ բառգիրք չպարգևեր, մեր լեզուն մերձ էր խանգարվելու, եղծանվելու և այս տեսնելով՝ չափազանց ցավում էինք<sup>28</sup>:

Այս բառարանով ամբողջանում է Մխիթարի լեզվաշինության մեթոդաբանությունը: Բառգրքի գործառության խնդիրներն են.

1. Ուղղություն տալ և՛ լեզվի կիրառությանը, և՛ դպրությանը, «վասնզի բառգիրքն է քանուն ուղղութեան՝ դպրութեան պարապելոց»<sup>29</sup>:

2. Վերականգնել բազմադարյան բառամթերքը աշխարհաբարյան շերտի մեջ՝ որակապես փոխելով նրա էությունը:

3. Գրաբարն ընդունել իբրև լեզվական գործող իրողություն՝ չկտրելու ազգի կապը իր մոտակա և հեռավոր անցյալից ու արմատներից, վերականգնելու լեզվի անընդհատությունը և միասնականությունը:

4. Արթնացնել հայերի մեջ արժանապատվության զգացում և հպարտություն, ամենագեղեցիկ և հարուստ բառազանձի տերը լինելու պատվախնդրություն:

Հավատարիմ մնալով Մխիթար Սեբաստացու բառարանաստեղծման սկզբունքներին՝ «Հայկազյան բառարանի» Բ հատորը շարունակում է Սկրտիչ Անանյանը: «Բառգիրքը» ոչ միայն հայկական, այլև համաշխարհային բառարանագիտության եզակի երևույթներից է: Մխիթարը և իր երկու օգնականները պեղել են հայոց ողջ մատենագրությունը, ամհամար մատյաններ համեմատել, ճշգրտել յուրաքանչյուր բառի իմաստային կիրարկումը, բառերի փոփոխությունները դարերի ընթացքում՝ ընտրելով ամենաբնորոշ նմուշները:

Հայկազյան բառարանը հրատարակվում է այն ժամանակ, երբ դեռևս համեմատական լեզվաբանության մեթոդը գիտական շրջանառության մեջ չէր: Առաջինը մխիթարյաններն են աշխատում այդ մեթոդաբանությամբ. «բառերու դիմաց դրուած յոյն, ասորի, լատին, եբրայական համապատասխանները իմաստներու ճշտումէն զատ՝ նպատակ ունին նպաստելու բառերու ստուգաբանութեան»<sup>30</sup>:

Մխիթար Սեբաստացին լեզուն դիտարկում է իբրև արվեստ (որի գործիքն է բառարանը): «Եւ զի որպէս դժուարին է լինիլ քաջ գիտնական՝ առանց զիտելոյ զարուեստ քերականութեան, նոյնպէս դժուարին է զոլ քաջ քերական, առանց լինելոյ զիտակ հանգամանաց բառից, զոր ուսանիմք նպաստութեամբ բառարանի»<sup>31</sup>:

Լեզվի արտահայտչականությունն ուժեղացնելու նպատակով մխիթարյանները մի շարք եղանակներ են մշակում, օրինակ՝ բառերի կարգը և դասավորությունը նախադասության մեջ, քերականական ձևերի ճիշտ ընտրությունը, բառիմաստների երանգների ընկալումների տարբերակումները և ռճը: Այսպիսի մտտեցման դեպքում լեզվամիջոցների ճիշտ կիրարկումները կապահովեն լիարժեք արտահայտչականություն: Լեզուն իր իմաստային-գաղափարական և արտահայտչական միջոցներով պիտի ունենա նույն ազդեցությունը,

<sup>28</sup> Մ. Սեբաստացի, Բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1, էջ 4:

<sup>29</sup> Նույն տեղում, էջ 6:

<sup>30</sup> Մ. Ճանաչեան, Պատմութիւն արդի հայ գրականութեան, հ. 11, Վեներտիկ, 1953, էջ 35:

<sup>31</sup> Մ. Սեբաստացի, Բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1, էջ 4:



ինչ արվեստի ստեղծագործությունը: Ըստ Մխիթարի՝ առանց արտահայտչականության լեզվի բովանդակային կողմը տուժում է: Բովանդակությունը և արտահայտչականությունը ներդաշնակ ամբողջություն պիտի կազմեն:

Սեբաստացու նվաճումներից պետք է համարել հայերենի գործառնական ոլորտի խնդիրները պարզաբանելը, ուստի «Քերականություն գրաբառ լեզուի հայկական սեղին» աշխատության Գ մասում Մխիթարը մի առանձին գլուխ է տրամադրում՝ պարզաբանելով հայկական գրության երեք տեսակները. ա) պարզ և հասարակ (օրինակ՝ «Յայսմատուրքը»), բ) միջին (Աստվածաշնչի մեծ մասի շարադրանքը), գ) լեզվի բարձրագույն գեղեցկություն և ճոխաբանություն, օրինակ՝ «Մակաբայեցուց գիրքը, Մովսես Խորենացույ, Նարեկացույ և այլ շարադրությունք»<sup>32</sup>:

Սեբաստացու պահանջը լեզվաշինարարներից հետևյալն է. չչեղվելով հայերենի տրամաբանությունից՝ պահպանել, զարգացնել դասական հայերենի ենթախորքը կազմող «գեղեցկագիտական» չափանիշները: Մխիթարյանների շնորհիվ արևմտահայ գրական լեզվի ճգնումը «գեղեցկագիտականը դարձավ», գրում է Ա. Չոպանյանը, նրանց լեզվում «գաղափար ու ձև հասասարապէս հասում ու խնամուած, ներդաշնակօրէն զիրար կը գրկեն»<sup>33</sup>:

Մխիթարյանները գրաբարի լեզվամտածողության հնարավորությունները և հարստությունն օգտագործելով՝ հորինեցին, հղկեցին, գեղեցկացրին աշխարհաբարը: Մխիթարից սկսած՝ աշխարհաբարը սկսեց որակապես փոխվել՝ դառնալով բարձրագույն գեղեցկություններն ըմբռնելու և արտադրելու ունակ լեզու՝<sup>34</sup>:

Մխիթարը լեզուն դիտում է ոչ միայն իբրև հաղորդակցության միջոց, այլև *նպատակ ինքն իր մեջ*, ազգի մտածողության և զգացմունքների արտահայտիչ: Լեզուն զգայություններին տալիս է համապատասխան արտահայտություններ՝ միաժամանակ ծնունդ տալով նոր զգացողությունների: Եթե Մխիթարը մշակում է այն ուղիները, որոնք պիտի տանեն դեպի գրական աշխարհաբարի գեղագիտական բարձունքները, ապա մխիթարյանները իրականացնում են դա. օրինակ՝ Ալիշանը հայերենի մեջ բացահայտում է արևելյան և արևմտյան լեզուներին բնորոշ շերտերը և մեջբերում է հայագետ Սեն-Մարտենի գնահատականը այն մասին, որ հայ պատմիչները գերազանցում են և՛ արաբ, և՛ պարսիկ պատմագիրներին, և՛ բյուզանդացի մատենագիրներին, որովհետև «առանց հեռանալու յարեւելան ճաշակէ՛ հեռի են յայլանդակ ցնորքներէ և ի փրալից շատխօսութենէ, առանց մեծաբանութեան»<sup>35</sup>:

Գեղագիտական լեզվի ամենամեծ բարձունքը դարձավ Ա.Բագրատունու «Հայկ դյուցազունը», որը «որպէս հայէրեն լեզու, բառամբերք, ճոխութիւն ու ճկունութիւն անմեծեմալի կոթող մըն է»<sup>36</sup>: Մխիթարի պահանջով մխիթարյանները ելրեք չեն շեղվում «գեղեցկագիտական» չափորոշիչներից: Ալիշանը անընդհատ կրկնում էր, որ հայի սիրտը հիացմունքով լցվեց, երբ իմացավ, որ ինքը արիական, մտահարուստ ու ազնվական ազգի զարմ ու սերունդ է: Չոպանյանը մխիթարյան գործունեության էությունը համարում է ճգնումը դեպի գեղեցիկը, կատարյալը, ներդաշնակը: Հայկական ճոխ, հզոր ու հուժկու բառամբերքը «կատարյալ ոմբակոծում էր», որ հայ ժողովրդի մեջ արթնացրեց «սերը հանդէպ գեղեցիկին, վսեմին եւ ազնուականին»<sup>37</sup>:

Մխիթարյանները գիտակցում են, որ ազգի գերակշռող մեծամասնությունը անգրագետ է, սակայն նրանց գործունեությունը փորձում է խտացնել ժամանակը՝ արագաբայլ հասնելու եվրոպական առաջադիմությանը՝ անցնելով նրանից:

<sup>32</sup> Զ. Թորոսեան, Վարք Մխիթարայ Աբբայի Սեբաստացույ, Վենետիկ, 1932, էջ 350:

<sup>33</sup> Ա. Չոպանեան, Ռուսահայեր ու քրքահայեր, «Անահիտ», Բարիզ, 1899, թիվ 11, էջ 326:

<sup>34</sup> Տե՛ս Ա. Չոպանեան, Մխիթարի գործը, «Անահիտ», Բարիզ, 1901, թիվ 8, էջ 180:

<sup>35</sup> Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 14:

<sup>36</sup> Ա. Թալաթիեան, Մխիթարեանները, Բեյրութ, 1967, էջ 36:

<sup>37</sup> Նույն տեղում:

Մխիթարի ծրագիրն իր կարևորությամբ երկու հավասար մակարդակ ունի՝ ուղղված հասարակ ժողովրդին և բարձր արժեքներ կրող մտավորականությանը: Աշխարհաբարի քերականության ստեղծումը (ներառած թուրքերեն բացատրությունները) դիմում է մեծամասնությանը, «Հայկազեան բառգիրքը», արդեն մտավորականությանը տրված հոգևոր զենքն է:

Սեբաստացին առաջադրում է ազգակազմակերպական շատ կարևոր սկզբունք՝ մտավորականների խավի արհեստավարժության և գոյծառության համապատասխանության խնդիրը: Այս նպատակին է ծառայում արհեստավարժությունն ապահովող լեզվատարբերակների մշակման նրա պահանջը:

Նա առաջնահերթ է համարում քաղաքական, հասարակական գործիչների կերտումը, առաջնորդների դասի ստեղծումը, ուստի աշխարհաբարի և գրաբարի քերականություններից անմիջապես հետո, դեռ չավարտած «Բառգիրքը», «Աստվածաշնչի մեկնությունը», ձեռնարկում է քաղաքական-հոետորական լեզվի մշակումը: 1733թ. Մխիթարը գրում է «Համառոտ ճարտասանութիւն» երկը՝ դուրսից ոճով: Այն պայտնակում է ճարտասանական բազմազան ձևեր՝ հստակ, համառոտ և նպատակահարմար օրինակներով. ինչպես տիրապետել խոսքի արվեստին, ինչպես ուժեղացնել բանավոր խոսքը, ինչպիսի մեթոդներ են օգտագործել անտիկ քաղաքական հոետորները՝ Դեմոսթենեսը, Կիկերոնը, Սոկրատեսը:

Մխիթարի նպատակն էր ազգային քաղաքական այնպիսի գործիչների պատրաստումը, ովքեր իրենց խոսքի ուժով կաշտպանեն հայոց իրավունքը նաև եվրոպական ատյաններում: Ուստի Մխիթարի գաղափարականը ժառանգած մխիթարյանները ճարտասանական արվեստը պահում են ուշադրության կենտրոնում, գրում են բազմաթիվ ճարտասանական գրքեր, թարգմանում, հրատարակում մի ամբողջ շարք՝ «Ճաշակք հելլեն և լատին ճարտասանից», Պոսյուեի դամբանականները, Դեմոսթենեսի ճառերը: Այն լեզվամիջոցները, որոնք գործածական են գրավոր խոսքում, բանավոր խոսքի մեջ կարող են թույլ հնչել:

Սեբաստացին լեզվաշինության ընդհանուր մեթոդաբանական հիմքի վրա մշակում է լեզվական մի քանի մեթոդներ կամ լեզվատարբերակներ՝ հրապարակախոսական-ճարտասանական, հոգևոր-կրոնական, թարգմանական, գիտական, մանկավարժական: Դրանք միմյանցից տարբերվում են լեզվական ձևերի և միջոցների կիրառման եղանակներով, իրականության նկատմամբ լեզվամշակման ուրույն սկզբունքներով: Լեզվամեթոդը կարող է նույնիսկ մոտենալ լեզվաոճին, բայց ընդհանուրի և մասնավորի կապի ձևով: Լեզվատարբերակը կամ լեզվամեթոդը լեզվամտածության պատմականազորեն ձևավորված տեսակ է, ավելի կայուն է, մեթոդաբանական սկզբունքները հաստատուն են: Լեզվատարբերակն ունի իրականության մշակման իր «գործիքը», ներգործության եղանակները, լեզվանշանային սեփական համակարգը և լեզվակազմակերպման մեթոդաբանությունը: Յուրաքանչյուր լեզվատարբերակի համար Մխիթարը ստեղծում է հիմնական սկզբունքները լիարժեքորեն արտահայտող օրինակ-ուղեցույց՝ «Համառոտ ճարտասանութիւն», «Իմաստասիրութիւն բարոյական և քաղաքական» (հիմնականում անտիկ փիլիսոփաներից քաղված օրինակներով):

Վենետիկում Սեբաստացու առաջին ձեռնարկությունը դառնում է վանքին կից ճեմարան բացելը, որը հետո վերածվում է անվանի կրթօջախի և լուծում հայ մտավորականներ կրթելու խնդիրը: Նրա ծրագրում կարևորվում է դպրոցների լայն ցանց ստեղծելը բոլոր գավառներում:

Մխիթարը գրում է մի քանի ուսումնական ձեռնարկներ (օրինակ՝ «Յաղագս մաթեմատիկայի»), որոնք, բացի ժամանակի գիտության պահանջներին համապատասխան լինելուց, դուրսընկալ են և ուսուցողական առումով: Մանկավարժական մեթոդական սկզբունքների կիրառումով մխիթարյանները հիմք են դնում նաև մանկական գրականությանը և XIX դարի 30-ական թվականներին լույս են ընծայում «Մատենադարան մանկանց» շարքը (1839-1846թթ.)՝ ընտրելով համաշխարհային գրականության ւայն ստեղծագործու-

թյունները, որոնք զարգացնում են հայ մանուկների միտքը, լեզուն, կրթում հոգին, նպաստում բարոյական-քաղաքացիական դաստիարակությանը:

**Մխիթար Սեբաստացու ծրագրային հիմնադրույթներից է ազգային մանկավարժության համակարգի ստեղծումը**, որը դառնում է մխիթարյան գիտնականների գործունեության հիմնական ուղիւտներից մեկը: Այս գործընթացի մեթոդաբանական հիմնարար սկզբունքն է լուսավորություն և կրթություն տարածել հայ մտավորականության միջոցով՝ **ազգային արժեքների ուսուցմամբ** վերականգնելով անցյալի մշակութային-գիտական-ուսումնական ավանդույթները՝ դրանք համադրելով նախ դասական, հետո եվրոպական գիտելիքի հետ: Մխիթարը ընդգծում է, որ եվրոպական նորույթներին պիտի մոտենալ զգուշորեն, ընտրովի: Նա երկար ժամանակ իր ձեռքն է առնում ազգի կրթության մենաշնորհը. «Մխիթարյան գրականության բացառիկ ազդեցության տակ էր ապրում բովանդակ հայությունը»<sup>38</sup>:

Սեբաստացու գիտամանկավարժական մյուս կարևոր մեթոդաբանական սկզբունքը (որի կիրառումը տեսանք մաև լեզվաշինության մեջ) հետևյալն է. չսկսել բարձրագույն գիտելիքից, այլ ցույց տալ, կառուցել այն ճանապարհները, որոնք տանում են դեպի գիտական բարձրունքները:

Մխիթարյաններն առաջինն են հայ իրականության մեջ ստեղծում հրապարակագրության լեզվատարբերակը, մամուլի յուրահատուկ ոճը և գրության ձևը: Նրանք առաջինն են հիմնում աշխարհաբար լրագրությունը: 1799-1802 թթ. լույս է տեսնում Ղ. Ինճիճյանի «Տարեգրութիւնքը», որով հիմք է դրվում ազգային լրագրությանը, միաժամանակ նա հրատարակում է «Նղանակ Բիւզանդեան» պարբերականը: 1843 թվականին սկսվում է «Բազմավէպի» տպագրությունը, որ շարունակվում է առ այսօր: «Բազմավէպում» մխիթարյանները սկսում են կիրառել քննադատական լեզու՝ պահանջելով հողվածագիրներից ապահովել նյութի գիտականությունը, կտրուկ, սեղմ, ամփոփ ոճը: «Բազմավէպը» դառնում է աշխարհաբար լեզվի ամենաբեղուն մշակողը և տարածողը: Այն երկար ժամանակ հայության համար ծառայում է լուսավորության, տեղեկատվության, ազգային հրատապ խնդիրների լուսաբանման հզոր աղբյուր՝ միաժամանակ զարգացնելով լեզվամշակութային գործընթացը:

Մխիթարյանները մշակում են մաև քերթողական կամ տաղաչափական լեզուն: Այս գործում ամենամեծ ներդրումն ունի Արսեն Բագրատունին: Նա վերականգնում է մախնիների հնագույն և մոռացված տաղաչափությունը: Գիտնական-բանաստեղծը նախ պարզում է հունական և լատինական տաղաչափությունը կազմող տարրերը, ապա քացահայտում արիական քերթողության գաղտնիքները: Հայկական տաղաչափությունը իրականանում է ոչ թե հելլենականի նման՝ վանկերի միջոցով, այլ անդամների թվի հաստատուն պահպանումով, իսկ մնացած բոլոր դեպքերում քերթողը ազատ է: Ըստ դրա՝ մեր մախնիների «մեծաչափը» կամ «դյուցազմական տաղը» յուրաքանչյուր քառյակ անդամով ոլորվում է և պահանջվում, որ ամեն տողի վանկերը 13-ից պակաս չլինեն: Այս պարզ օրինաչափության բացահայտումով Բագրատունին «կու գար բանալ Հայկական տաղաչափութեան կազմութեան ու դաշնակաւորութեան բոլոր գաղտնիքը»<sup>39</sup>:

Սեբաստացու լեզվաշինության ազգակազմակերպման ծրագրի գաղափարական հիմնադրույթների համակարգված բնույթը, միտվածությունը, հեռահար նպատակաուղղվածությունը և քաղաքական նպատակները չեն հասկացվել: Այս ամենի, ինչպես մաև չարդարացված նորարարության և թելադրված անջատողական քաղաքականության հետևանքով հայությունը կանգնեց երկու գրական հայերեն ունենալու փաստի առջև<sup>40</sup>:

<sup>38</sup> Լեռ, Հայոց պատմություն, «Երկերի ժողովածու», հ. 3, մաս II, Եր., 1973, էջ 495:

<sup>39</sup> Բ. Սարգսեան, Երկահիւրամեայ գրականական գործունէութիւն եւ նշանաւոր գործիչներ Վենետկոյ Մխիթարեան միաբանութեան, էջ 39:

<sup>40</sup> Աճառյանը գրավոր լեզուների բաժանման կապակցությամբ գրում է. «Պոլսի գրական լեզուն սկսաւ ուրեմն տարածուել ամեն կողմ, նոյն իսկ Կովկասում... քայց ռուսահայ գրողները, մաս-

Այսօր դառն իրողություն է երկու գրական լեզու ունենալը: Պատմական Հայաստանը ունեցել է մի քանի անկախ իշխանություններ, սակայն մշտապես պահպանել է ազգային միության երկու կարևորագույն օղակ՝ միասնական եկեղեցի և միասնական գրական լեզու: Արդիական մեծ հնչեղություն ունեն Մխիթար Մեքաստացու լեզվաշինության գաղափարադրությունը, որոնք հիմք են ծառայում միասնական լեզվի, պատմության, մշակույթի և ազգային ինքնության համար:

**А. К. КАЗАРЯН - Идеологические и методические основы и применение процесса армянского языкотворчества мхитаристов.** - В статье освещены выдвинутые М. Себастиани основополагающие принципы процесса языкотворчества как первого и основного этапа армянского духовного возрождения.

М. Себастиани первым в армянской действительности предпринимает процесс армянского языкотворчества, рассматривает армянский язык как единую систему, основу национального самосознания и намечает пути развития языковой культуры. Он разрабатывает методологию процесса языкотворчества.

Основной задачей политики национального самосохранения М. Себастиани считает упорядочение ашхарабара(новоармянского языка), которое необходимо осуществлять методом сопоставления. Он ставит задачу восстановления языкового материала грабара (староармянского языка) в ашхарабаре. Согласно историческому принципу язык является исторической реальностью и так же, как и история нации, непрерывен.

М. Себастиани первым создает систематизированную программу ашхарабара, упорядочивает значительно искаженный в прошлые века грабар. За основу языкотворчества он принимает классическое языковое мышление 5-го века. Одним из программных принципов М. Себастиани является создание национальной педагогической системы. Языкотворчество М. Себастиани, как основа программы социальной организации нации, имело дальнюю целенаправленность и подчеркнутую политическую тенденцию.

---

նաւորապէս Նազարեանը, այդպէս չմտածեցին (իմա՝ ունենալու մեկ ընդհանուր գրական լեզու): Նազարեանը ընդհակառակն կողմնակից էր բաժանման և զարկ տալով Նազարեան ճեմարանում կազմուած գրական բարբառին կատարուեց վերջապէս տխուր բաժանումը, և ձևացան հայ ազգի մէջ երկու գրական լեզուներ և երկու գրականութիւն. արեւելեան և արեւմտեան», Հ. Աճառեան, նշվ. աշխ., էջ 37: